հայհոյելու, որովհետև դա մեծ մեղք է մեզ համար: Խանն ասաց՝ դու քեզ անմեղ ցույց տալով՝ կամենում ես ինձնից ազատվել: Եվ երկու մարդու հրամայեց՝ մորուքն ու բեղերը, արտևանունքները և հոնքերը փետել: Այդպես էլ արին: Հրամայեց նրա գլխին դնել ոչխարի մորթի* և շրջեցնել ամբողջ քաղաքը: Բայց այդ չարին թողին, որ գնա իր տունը՝ Սաղմոսավանք: Բայց Աստծու բարկությունն ու արդարադատի հատուցումը շուտափույթ հասան նրանց: Քանզի նույն տարին չար հիվանդություն հասավ քահանային: Նրա ծակոտված մարմինը դարձավ որդնալից. նա աղաղակելով ասում էր՝ պարոն տեր, պարոն տեր: Ապա նրա չորս որդիները գնացին առ պարոն տերը, շատ աղաչանքներով ու լալով խնդրում էին ներում իրենց հոր (քահանայի) համար: Պարոն տերը թուղթ գրեց, թե Աստված ներում է քո հանցանքը, մեղքերից ազատվում ես: Գրությունը առան տարան և կարդացին իրենց հոր (քահանայի) վրա և դրին նրա աչքերին, անմիջապես մեռավ: Իսկ խանի պատիժն այն էր, որ շահից ստացավ նույն տարին: Իսկ ինքը Հովհաննես եպիսկոպոսը իր կամքով վանքի առաջնորդությունը հանձնեց իր եղբորորդի Գաբրիել վարդապետին, որ դեռ նոր էր եկել Սուրբ Էջմիածնի նվիրակությունից. անապատում (վանքում) մնաց որոշ օրեր: Մուղդուսիները Եղեգնաձորի Շատիկ[137] անապատից եկան: Աղաչեցին ու ասացին՝ մենք անապատի կարգերն ու սահմանները չգիտենք, դու եկ և մեզ կարգավորիր: Եվ ըստ նրանց աղաչանքի ելավ գնաց: Եվ ըստ անապատի կարգի կարգավորեց նրանց ուղիղ և ամեն բարեձևությամբ: Այդ պատճառով սատանան նախանձեց նրա բարի վարքի համար, փորձության ենթարկեց Աստծու մարդուն: Մի մենակյաց շամախեցի Սահակ անունով մահացու դեղ պատրաստեց և խառնեց նրա կերակուրին: Նա մի պատառ առավ կերավ և նրան հայտնվեց չարի հնարանքը: Իր սպասավորին ասաց՝ առ այս կերակուրը լռելյայն և դուրս թափիր: Ագռավները, կաչաղակները եկան, կերան, անմիջապես սատկեցին: Իսկ երանելի մարդը ոչինչ չասաց նրանց, այլ գաղտնի իր միաբաններով ելավ այնտեղից, եկավ Սուրբ Աթոռ Էջմիածին և Հակոբ կաթողիկոսի հրամանով իր միաբաններին ուղարկեց Սաղմոսավանքի անապատը, իսկ ինքը մնաց այնտեղ որոշ օրեր միաբաններին դասախոսելու: Սկսեցին Աստվածաշունչը մինչև Մակաբայեցիների վերջը: Ապա ինքն էլ ելավ գնաց անապատը և այնտեղ մնալով վախճանվեց: Նրա եղբորորդին նրա մարմինը տարավ Սաղմոսավանք և դրեց Աստվածածնի եկեղեցում՝ հյուսիսային կողմում: Պետք է իմանալ, որ նա երեք փորձության ենթարկվեց, նախ՝ մաքառեց դևերի դեմ Լիմ անապատում, երկրորդ՝ մորուքի փետումը, երրորդ՝ մահու դեղը: Բայց նրա մահը եղավ հազար հարյուր վեցին (1657):

* Բնագրում՝ Քաղիրթ, նշանակում է նաև ստամոքսի մի մասը (դելավ):





## ԳԼՈՒԽ Լ
### *ՍՐՏԱՊԱՏԱՌ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ*

Ես գնացի Խնկելաձոր, որ այժմ կոչվում է Ձորագեղ, իմ քեռուն տեսության: Մինչդեռ խոսում էինք, ահա եկավ մի երիտասարդ մարդ և նստեց մեզ մոտ: Իմ քույրը ինձ ծածուկ ասաց՝ նայիր այդ մարդու երեսին: Եվ տեսա, որ սևացավ ինչպես հնդիկ: Մի քիչ մնաց, տեսա, որ սպիտակեց ինչպես ձյուն: Մի քիչ հետո կարմրեց, ինչպես բոց. մի ժամում տասը գույն փոխեց: Ես սառել զարմացել էի: Ասացի մարդուն՝ եղբայր, դու որտեղացի ես: Մարդը պատասխանեց՝ Սյունիքից: Ես հարցրի, թե այդ ինչ բան է, որ քո երեսը գույնից գույն է փոխվում: Մարդը պատասխանեց՝ Աստված է ինձ իմանում: Ես ասացի՝ լավ, պատմիր: Մարդը իր գյուղի անունն ասաց, բայց իմ մտքից ընկել է:

Մեր գյուղում մի գեղեցիկ ու ազնիվ կույս կար: Ես և աղջիկը միմյանց սիրեցինք: Մեր ծնողներին ասացինք՝ մեզ ամուսնացրեք, բայց նրանք չկամեցան, քանզի նրանց միջև թշնամություն կար: Եվ երբ մենք տեսանք, որ մեր կամքը չի կատարվում, ապա համաձայնվեցինք, առևանգվելով փախանք՝ մեզ հետ վերցնելով հաց, փռոց, վերարկու և գնացինք, հեռացանք գյուղից: Մտանք մի ձոր, այնտեղ մի քարայր կար, մտանք այնտեղ և գործեցինք մեր չար գործը: Գիշերն այնտեղ մնացինք և կամեցանք, որ ցերեկն էլ այնտեղ մնանք, իսկ մյուս գիշերը ելնենք գնանք Երևան: Հոգնած էինք, գիշերը քնեցինք, որովհետև լուսաբացին մոտ էր, և ցերեկը (քնել ենք) մինչև կեսօր: Ես խոր քնի մեջ էի, աղջիկը ելավ լալով զարթնեցրեց ինձ: Ես զարթնեցի տեսա, որ մի ահագին վիշապ աղջկա